


**ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ Ն. Է., ՎԱՐՉԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՂԱՐԱՔԱՂՈՒՄ 1813-1867 ԹԹ., ԽՍԲ.՝ Վ. ԲԱԼԱՅԱՆԻ,  
ԵՐԵՎԱՆ, «ԱՆՏԱՐԵՍ», 2015, 256 ԷԶ:**



Արցախի պետական համալսարանի և Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց համալսարանի գիտխորհուրդների որոշմամբ լույս է տեսել պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Ն. Բ. Բաղդասարյանի «Վարչաքաղաքական և սոցիալ-տնտեսական կացությունը Ղարաքաղում 1813-1867 թթ.» ուսումնասիրությունը, որը միանգամայն արժանի է իր վրա բեռեցնելու գիտական հասարակության ուշադրությունը: Ընթերցողի սեղանին դրված ուսումնասիրությունն իրականացվել է ՀՀ Ազգային արխիվի, Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվային վավերագրերի, տպագիր սկզբնաղբյուրների, պատմագիտական գրականության, ժամանակի

պարբերական մամուլի վերլուծության արդյունքում: Հիրավի այն առաջին փորձն է գիտական հանրությանը ներկայացնելու Արցախի պատմության նշված ժամանակահատվածը: Աշխատության մեջ քննարկվող ժամանակահատվածում գտնվելով ռուսական կայսրության կազմում՝ Ղարաքաղն անմասն չէր կայսերական վարչաքաղաքական, սոցիալ-տնտեսական համակարգում առկա փոփոխություններից: Հեղինակը Ղարաքաղի պատմությունը մի կողմից՝ դիտարկել է համակովկասյան քաղաքական զարգացումների համատեքստում, մյուս կողմից՝ պատմական գտնահատականների հարցում հաշվի են առնվել քաղաքական և սոցիալ-տնտեսական առանձնահատկությունները:

Մեծ է նաև աշխատության քաղաքական-ռազմավարական նշանակությունը, մասնավորապես հակառակորդ պետության՝ Ադրբեջանի հակաքարոզչության, իրական պատմության խեղաթյուրման պայմաններում անհրաժեշտություն էր նշյալ չուսումնասիրված պատմաշրջանի լուսաբանումը և այն գիտական ու համակիր հանրությանը ներկայացնելը: Հեղինակը ուսումնասիրության արդիականության շեշտադրումները հիմնավորել է հետևյալ տրամաբանությամբ. խորհրդային շրջանի պատմագիտության կապանքներից ձերբազատվելուց հետո անհրաժեշտություն է առաջացել Նորովի վերագնահատելու պատմական անցյալը՝ խուսափելով արդեն իսկ քննության առկա կարծրատիպերից:

Աշխատության ժամանակագրական շրջանակները հեղինակը հիմնավորում է այն ընդգրկում է 1804-1813 թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո կնքված՝ Գյուլիստանի հաշտության պայմանագրի կնքումով Ղարաքաղի՝ Ռուսական կայսրու-

թյան տիրապետության տակ անցումից մինչև 1867 թ. Ելիզավետպոլի նահանգի ստեղծումը:

Հատկանշական է, որ Ն. Բաղդասարյանի կողմից թեմայի խորքային ուսումնասիրության արդյունքում առաջ է քաշվել ցարական կառավարության կողմից իրականացված քաղաքականության պարբերացման և փոխավորման սկզբունքը: Մասնավորապես՝ 1813-1822 թթ. ցարական կառավարության կողմից իրականացված քաղաքականությունը ինչպես ռուսահպատակ անդրկովկասյան տիրույթներում, այնպես էլ Ղարաբաղում հիմնականում ծանոթության և փորձարարության բնույթ էր կրում: 1822-1840 թթ. նշանավորվեցին իշխանության կենտրոնացման, տնտեսական յուրացմանն ուղղված միջոցառումներով: 19-րդ դարի 40-60-ական թթ. ընդգրկող փուլը բնութագրվում է նոր վարչաքաղաքական փոփոխություններով, ինչի արդյունքում Ղարաբաղում հաստատվում է կառավարման քաղաքացիական կարգ, կարգավորվում է դատական և հարկային համակարգը:

Աշխատության ներածականում հեղինակն իրավացիորեն նկատում է, որ պատմագիտությունը Գյուլիստանի պայմանագրի նշանակությունը դիտարկել է Անդրկովկասը Ռուսաստանին միացնելու համատեքստում՝ տարբել գնահատականներ տալով քաղաքական այս ակտին՝ առաջադիմականից մինչև «չարյաց նվազագույնը», սակայն գոյություն չունի պատմագիտական որևէ ուսումնասիրություն, որտեղ համակողմանիորեն քննության առնված լինելը Ղարաբաղի՝ Ռուսաստանին միացման հետևանքների ուսումնասիրությունը, միացմանը հետևած վարչաքաղաքական և տնտեսական կացությունը, հարափոփոխ այն իրադրությունը, որ տիրում էր մինչև Ելիզավետպոլի նահանգի ստեղծումը:

Առաջին գլուխը «Վարչաքաղաքական կացությունը Ղարաբաղում 1813-1867 թթ.» բաղկացած է երեք ենթագլուխներից: Առաջին ենթագլխում՝ «Գյուլիստանի պայմանագրի քաղաքական հետևանքները», հեղինակը ներկայացրել է 1813 թ. հեկտեմբերի 12-ին Ղարաբաղի միացումը Ռուսաստանին, պայմանագրի դրական և բացասական քաղաքական հետևանքները: Նա Գյուլիստանի պայմանագրին տալիս է հետևյալ գնահատականը. «Պատմական օրինաչափությամբ միայն հետամնաց մի տիրապետության փոխարինումը համեմատաբար զարգացած աստիճանով պետք է առաջադիմական համարել: Սակայն օրինաչափություններից բացի գոյություն ունեն նաև պատմական փաստերի գնահատման չափանիշներ, որ թույլ են տալիս մեզ հակվել այն կարծիքին, որ Գյուլիստանի պայմանագրով Ղարաբաղի միացումը Ռուսաստանին «չարյաց նվազագույնն էր»:

Իրականում սա այնքան էլ խիստ կամ ծայրահեղ որակում չէ, իմաստաբանությունը շատ հստակ է. երբեք օտարի տիրապետությունը չի կարող «բացարձակ բարիք» լինել, իսկ տվյալ դեպքում ռուսական տիրապետությունը համեմատաբար «չարիքներից նվազագույնն» էր: Պայմանագրով ստեղծված նոր իրավիճակը պարզապես պետք է դիտարկել որպես պատմական իրադարձությունների զարգացման արդյունքում ձևավորված նոր, անխուսափելի փուլ՝ իր ունեցած դրական ու բացասական հետևանքներով»:

Երկրորդ ենթագլխում՝ «Արցախահայությունը 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմում», ներկայացված է 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմը և նրա հետևախորքում Շուշիի հերոսական պաշտպանությունը: Խույս տալով հանրա-

հայտ փաստերից՝ հեղինակն ուշադրության է արժանացրել այդ դեպքերի՝ ցայտ չուսումնասիրված կամ մասամբ միայն լուսաբանված կողմերը:

Յեղիևակն առաջ է քաշել այն ծանրակշիռ փաստարկները, որոնց համաձայն՝ պարսկական կողմն առաջին հարվածներից մեկը հասցնելու էր Ղարաբաղին, բայց նման պատասխանատու պահին Ա. Երմոլովի ուշադրությունը կենտրոնացված էր միայն Թիֆլիսի վրա: Աշխատանքում փաստացի հիմնավորվել է Շուշիի 55-օրյա պաշարման տեսակետը՝ ի հակադրություն հայ պատմագրության մեջ ընդունված Շուշիի 48-օրյա կամ 50-օրյա պաշարման տևողության: Ըստ հեղինակի հաստատված տեսակետների՝ Նորովի մեկնաբանությունը նպատակ ունի վերհանելու ոչ թե 5-6 օր կազմող անճշտությունը, այլ ճշգրտելու կողմերի ռազմավարությունը: Յեղիևակը մեծ ուշադրություն է դարձրել նաև «Շուշիի պարիսպներից դուրս» տեղի ունեցած իրադարձություններին: Յատկանշական է, որ այս ճշգրտումները կարող են օգտակար լինել հայոց պատմության համապատասխան ժամանակաշրջանի ուսումնասիրության գործում: Յեղիևակի կողմից տրամաբանական հիմնավորում է ստացել Շուշիի պաշտպանության նշանակությունը, մասնավորապես առանձնացվել է այն հանգամանքը, որ Շուշիի պաշտպանությունը հնարավորություն տվեց ռուսական բանակին անցնելու հակահարձակման և հաղթելու Շամխորի և Ելիզավետպոլի ճակատամարտերում: Ի վերջո, այն փրկություն էր ամբողջ Վրաստանի համար, որի գլխավոր ուժերը կենտրոնացված էին Թիֆլիսում: Նա իրավացի է, երբ հիմնավորում է, որ Շուշիի պաշտպանությունն իրականում պատերազմի ելք վճռող կարևոր ռազմական իրադարձություններից էր:

Ի պատասխան աղբյուրներից կեղծարարության հեղինակը հիմնավորել է նաև Թուրքմենչայի պայմանագրի արդյունքում Պարսկաստանից Ղարաբաղ տեղափոխվածների մոտավոր թվաքանակը՝ մատնանշելով, որ գաղթածները հիմնականում 18-րդ դարի վերջի և 19-րդ դարի սկզբին քաղաքական անսպաստ հանգամանքների արդյունքում Ղարաբաղից Ղարադաղ տեղափոխված հայերն էին, որոնց թիվը չէր անցնում 100 ընտանիքից: Իրականում աղբյուրներից կեղծարարության մեջ այդ թիվը հասցվում էր 130000-170000-ի՝ հիմնավորելու Ղարաբաղի հայ բնակչության «եկվորության» և մահմեդական բնակչության «բնիկության» հակապատմական տեսությունները:

Երրորդ՝ «Ղարաբաղը՝ Ռուսական կայսրության վարչաքաղաքական բարեփոխումների նախագծերում և որոշումներում 1822-1867 թթ.» ենթագլխում հեղինակը քննարկել է ցարիզմի քաղաքականությունը՝ 1822թ. Ղարաբաղում խանական վարչակարգի վերացումից մինչև 1867 թ. դեկտեմբերի 9-ի ցարական կառավարության հերթական վարչաքաղաքական բաժանումով Ղարաբաղի հայտնվելը Ելիզավետպոլի նահանգի կազմի մեջ:

Ն. Բաղդասարյանը մանրամասն վերլուծության է ենթարկել Անդրկովկասի կառավարման բարեփոխումների նախագծերում Ղարաբաղի գավառի կառավարման հարցը: 1822-1834 թթ. Ա. Երմոլովի, Պ. Սանկովսկու, Ե. Կանկրինի, Ի. Պասկևիչի, Ա. Չերնիշևի, Դ. Բլուդովի և այլ նախագծերում քննարկվում էին Ղարաբաղի ինդիքները: Նախագծերում առաջարկված վարչատարածքային բաժանումների հիմքում դրված էր միայն տնտեսաաշխարհագրական գործոնը:

Յեղիևակը մանրամասնել է 1840-1860-ական թթ. Անդրկովկասի վարչաքաղաքական բաժանումները և ընդգծել Ղարաբաղի տեղը: 1840 թ. ապրիլի 10-ին Նիկոլայ 1-ինը հաստատում է Անդրկովկասի բաժանման Նոր Նախագիծը, որն օրենքի ուժ է ստանում: Ղարաբաղն այդուհետ գտնվելու էր Կասպիական մարզի կազմում: 1846 թ. դեկտեմբերի 14-ին ցարական կառավարությունը Անդրկովկասը Նոր վարչական բաժանման է ենթարկում: Չանգեզուրն ու Ղարաբաղը՝ Շուշի վարչական կենտրոնով, մտնում են Շամախի նահանգի, իսկ 1859 թ. դեկտեմբերի 6-ից՝ Բաքվի նահանգի մեջ: 1867 թ. դեկտեմբերի 9-ի՝ ցարական կառավարության ընդունած Նոր օրենքով Լեռնային Ղարաբաղը մտնում է Ելիզավետպոլի նահանգում:

Ն. Բաղդասարյանն ընդհանրացնելով 1822-1867 թթ. ցարիզմի կողմից Ղարաբաղում իրականացված վարչաքաղաքական նախագծերի և որոշումների քննությունը՝ ցույց է տվել, որ ցարիզմը հավատարիմ էր մնացել Էթնիկ կենտրոնացումներից խուսափելու իր քաղաքականությանը, իսկ նախագծերում առաջ քաշված եզակի առաջարկները՝ Ղարաբաղը և Յայկական մարզը մեկ վարչաքաղաքական միավորի մեջ միավորելու մասին, այդպես էլ մնում էին թղթի վրա՝ պատճառաբանելով բացառապես աշխարհագրական նկատառումներով:

Ն. Բաղդասարյանը հատկանշում է այն հանգամանքը, որ 19-րդ դարի 40-60-ական թթ. ցարական կառավարության օրենքներն ու կանոնադրությունները կյանքի կոչելու ամբողջ ընթացքում ցարիզմը Ղարաբաղում հովանավորելով մահմեդական բարձր դասին՝ միևնույն պահին տեղական ինքնակառավարման կարևոր պաշտոններում նշանակում էր հայերին: Աշխատության մեջ կարդում ենք. «Չնայած ինքնակալությունն իր օրենքներում և կանոնադրություններում պաշտպանում էր մահմեդական բեկերին, սակայն դա առավել շատ վերջիններիս իր դեմ չտրամադրելու համար էր արվում: Փաստորեն, ցարիզմի վերոնշյալ քաղաքականությունը տեղում քաղաքական հակակշռություն ստեղծելու և այդ ճանապարհով սեփական հենարանն ամրապնդելու նպատակ էր հետապնդում»:

Աշխատության երկրորդ գլուխը՝ «Սոցիալ-տնտեսական կյանքը Ղարաբաղում 1813-1867 թթ.: Ցարիզմի գաղութային քաղաքականության դրսևորումները Ղարաբաղում», բաղկացած է հինգ ենթագլուխներից: Առաջին ենթագլխում՝ «Գյուղատնտեսությունը, արհեստները, առևտուրը», խորքային վերլուծություն է հատկանշված ոլորտների ուսումնասիրության ուղղությամբ:

Ղարաբաղի անվտանգության ապահովումը, ներքաղաքական մասնահատվածության վերացումը մեծ նշանակություն ունեցան երկրի տնտեսության զարգացման գործում: Յեղիևակը ցույց է տվել, որ ռուս-պարսկական պատերազմների ժամանակ թատերաբեմ դարձած Ղարաբաղը մեծապես տուժել էր, տնտեսական կյանքը քայքայվել: Սակայն դրանց ընդմիջման պահին անգամ Ղարաբաղը կրկին բռնել էր տնտեսական շենացման ուղին: Աշխատության մեջ ներկայացված աղյուսակների ցուցանիշները վկայում են, որ գյուղատնտեսությունը հաստատուն զարգացման ուղին էր բռնել: Ղարաբաղից առավելագույն շահույթ ստանալու նպատակով ցարական կառավարությունը խրախուսում էր տնտեսության մի շարք ճյուղերի զարգացումը:

Աշխատության մեջ հատկանշվել է Շուշիի տեղը, հատկապես արտաքին առևտրի առումով այն կանգնած էր ժամանակի նշանավոր առևտրական կենտրոնների կող-

քին: Ուսումնասիրված ժամանակաշրջանում Շուշին Անդրկովկասի առևտրական կապիտալի ձևավորման կենտրոններից էր:

Չնայած գոյություն ունեցած խանգարիչ գործոններին՝ միասնական դրամական, չափի ու կշռի համակարգերի բացակայությանը, առևտուրը Ղարաբաղում զարգանում էր՝ կրելով որոշակի առանձնահատկություններ: Ներքին առևտուրը շարունակում էր առավելապես բնատուր տեսք ունենալ. Շուշիի առևտրականները արտահանում էին Ղարաբաղում արտադրվող ապրանքների քիչ մասը՝ հանդես գալով առևտրի մեջ միջնորդի դերում:

Երկրորդ ենթագլխում «Ցարական Ռուսաստանի հարկային քաղաքականությունը Ղարաբաղում», քննարկվել է հարկային համակարգը կարգավորելու ուղղությամբ ցարական կառավարության իրականացրած քաղաքականությունը: Հեղինակը մատնանշում է, որ ցարիզմի գաղութային քաղաքականությունն իր ամբողջ ելույթով արտահայտվել է հարկային համակարգի կարգավորման գործում, որի վերջնական նպատակն էր Ղարաբաղից հնարավորինս առավելագույն շահույթ ստանալը: 19-րդ դարի 40-ական թթ. նոր հարկային համակարգի ստեղծման ուղղությամբ սկսած աշխատանքներն ավարտվել են միայն 1858 թ., երբ ցարական կառավարության կողմից հաստատվել է Ղարաբաղի համար սահմանված նոր, առավել ծանր հարկաչափ:

Աշխատության երրորդ՝ «Դասային հարաբերությունները» ենթագլխում խնդիրը վերլուծության է ենթարկվել իր առանձնահատկություններով: Հեղինակը հատկանշում է, որ Ղարաբաղի 19-րդ դարի դասային հարաբերություններն առանձնացել են իրենց բարդությամբ, քանի որ ժառանգություն էին մելիքական շրջանի, խանական և ռուսական տիրապետությունների, որոնցից յուրաքանչյուրն իր կնիքն է թողել նրա ձևավորման վրա:

Չորրորդ՝ «Ղարաբաղի ռուս վերաբնակները (Ռուսաստանի ժողովրդագրական քաղաքականությունը)» ենթագլխում հեղինակը ներկայացրել է ցարական կառավարության կողմից ռուս աղանդավորներին Ղարաբաղում վերաբնակեցնելու պատճառները, ընթացքը և հետևանքները: Աշխատության մեջ հիմնավորվել է այն գաղափարը, որ ցարական կառավարությունն այս քաղաքականությամբ մի քանի նպատակների հետ մեկտեղ լուծում էր տեղում ազգային հենարանի ստեղծման հարցը: Ն. Բաղդասարյանին հաջողվել է լուսաբանել կայսրության կողմից Ղարաբաղում իրականացված ժողովրդագրական քաղաքականությունը, որն արտահայտվել է հպատակ երկրամասը ռուսական տարրով բնակեցնելու փաստով, որի արդյունքում 19-րդ դարի 30-40-ական թթ. Ղարաբաղում բնակություն էր հաստատել 1647 ընտանիք, որոնց մի մասը հետագայում տեղափոխվել է տարածաշրջանի այլ հատվածներ:

Աշխատության հինգերորդ ենթագլխում՝ «Հակաավատատիրական և հակացարական ելույթները Ղարաբաղում», լուսաբանվել են 19-րդ դարի 30-50-ական թվականներին Ղարաբաղում տեղի ունեցած հակաավատատիրական և հակացարական ելույթները, որոնք պայմանավորված էին ծանր և չհամակարգված հարկային համակարգի, հարկահավաքության ընթացքում կիրառվող կամայականություններով և բռնություններով:

Հեղինակն ամփոփելով ուսումնասիրությունը՝ նշում է, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում ցարիզմի կողմից Ղարաբաղում իրականացված քաղաքական և

տնտեսական քաղաքականության նպատակն էր ուժեղացնել երկրամասի ենթակա-  
յությունը կենտրոնական իշխանությանը:

Աշխատության թեմայի հրատապությունը և արդիական մեծ նշանակությունը,  
ինչպես նաև պատմաշրջանի չուսումնասիրված լինելը ենթադրում էր ամբողջական և  
կլուռ ուսումնասիրություն: Այդ փաստի ընկալման ու մեծ պատասխանատվությամբ  
խնդրո առարկայի լուսաբանման արդյունքում ստեղծվել է մեծարժեք, փաստական  
հարուստ հենք ունեցող ուսումնասիրություն: Կարծում ենք, որ Ն. Բաղդասարյանի  
տքնաջան աշխատանքի արգասիքը հանդիսացող աշխատությունը կարող է օգտա-  
կար լինել պատմաբանների, միջազգայնագետների, հայագիտությամբ և կովկասա-  
գիտությամբ զբաղվողների, ուսանողների և ընթերցող լայն հասարակայնության  
համար: Ամփոփելով՝ նշենք, որ գործ ունենք գիտական լուրջ աշխատության հետ,  
որը նշանակալի ներդրում է հայ պատմագիտության ասպարեզում:

Պատմական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր **ԷՂԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ**

Պատմական գիտությունների թեկնածու,  
ԱՐՊՀ պրոֆեսոր **ԱՐԱՐԱՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ**